

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:


Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Նկարում մթնոլորտի ո՞ր շերտն է նշված *Ա* տառով.

- 1) ջերմոլորտը
- 2) ներքնոլորտը
- 3) վերնոլորտը
- 4) արտաքին ոլորտը



2

Միջին մասշտաբի քարտեզներ են.

- 1) 1 : 5 000 000 — 1 : 10 000 000
- 2) 1 : 10 000 — 1 : 200 000
- 3) 1 : 200 000 — 1 : 1 000 000
- 4) 1 : 1 000 000 — 1 : 5 000 000

3

Հասարակածի վրա տեղակայված երկու քաղաքների հեռավորությունը 4000 կմ է, իսկ քարտեզում՝ 20 սմ: Քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 80 000 000
- 2) 1 : 20 000 000
- 3) 1 : 40 000 000
- 4) 1 : 60 000 000

4

Երկրի՝ իր առանցքի շուրջը պտույտի հետևանք չէ.

- 1) ժամային գոտիների առանձնացումը
- 2) գիշեր-ցերեկ հերթափոխությունը
- 3) տարվա եղանակների առաջացումը
- 4) շարժվող մարմինների հետագծի շեղումը իր սկզբնական ուղղությունից

5


Երկրի մակերևույթում այն տեղը, որը երկրաշարժի օջախի վերևում է և նրան ամենամոտն է, կոչվում է.

- 1) ցունամի
- 2) հիպոկենտրոն
- 3) էպիկենտրոն
- 4) սեյսմոգրաֆ

6

Ըստ նկարի՝ տարվա n° ր եղանակն է հարավային կիսագնդում.

- 1) ձմեռ
- 2) գարուն
- 3) ամառ
- 4) աշուն



7

Բնութագրումով որոշել լեռների հասակը.

Այդ հասակի լեռները սովորաբար բարձր են, կատարները՝ սրածայր, լանջերը՝ զառիթափ: Ի՞նչ հասակի լեռներ են.

- 1) հնագույն
- 2) երիտասարդ
- 3) հին
- 4) միջին

8


Երևան քաղաքում հունվարի 10-ին գրանցվել են օդի հետևյալ ջերմաստիճանները՝ -5° , -9° , -6° , -4° , $+3^{\circ}$, $+5^{\circ}$, $+2^{\circ}$, -2° : Օդի միջին օրական ջերմաստիճանը կլինի.

- 1) -4°
- 2) 2°
- 3) 3°
- 4) -2°

9


Նկարում կետի n° ր բարձրությունն է նշված F տառով.

- 1) միջին
- 2) հարաբերական
- 3) բացարձակ
- 4) առավելագույն



10 Նկարում *Ա* տառով նշված է գետի.

- 1) ջրբաժան գիծը
- 2) հունը
- 3) ողողատը
- 4) ջրհավաք ավազանը



11 «Գետ — հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Չամբեզի — ամառ
- 2) Եփրատ — ձմեռ
- 3) Հուանհե — գարուն
- 4) Օրինոկո — ձմեռ

12 Ո՞ր բնական զոնային են առավել բնորոշ սառցադաշտերի ներգործությամբ ստեղծված ռելիեֆի ձևերը.

- 1) բարեխառն գոտու տափաստանների և անտառատափաստանների
- 2) սավաննաների և նոսր անտառների
- 3) անապատների և կիսաանապատների
- 4) արկտիկական անապատների

13 Բնութագրումով որոշել նեղուցը.

Այդ նեղուցը միացնում է երկու օվկիանոս և անջատում է Հրո երկիր կղզին մայրցամաքից: Ո՞ր նեղուցն է.

- 1) Մագելանի
- 2) Բերինգի
- 3) Կուկի
- 4) Թորեսի

14 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անցումային կլիմայական գոտիները ևս ունեն իրենց բնորոշ օդային զանգվածները:
- 2) Տարվա տարբեր սեզոններին անցումային կլիմայական գոտիներ են թափանցում տարբեր տիպի օդային զանգվածներ:
- 3) Անցումային կլիմայական գոտիներում օդի ջերմաստիճանի, տեղումների քանակի և գերիշխող քամիների սեզոնային փոփոխություններ չկան:
- 4) Անցումային կլիմայական գոտիները այդպես են կոչվում այն պատճառով, քանի որ դրանք անցնում են տաք և ցուրտ կլիմաների միջև:

15

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Յուրաքանչյուր ժամային գոտու համար գոտիական ժամանակ է ընդունվում նրա կենտրոնով անցնող միջօրեականի տեղական ժամանակը:
- 2) Յուրաքանչյուր ժամային գոտի ընդգրկում է 30°:
- 3) Միջօրեականի վրա տվյալ պահին դիտված ժամանակը կոչվում է դեկրետային ժամանակ:
- 4) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է գլխավոր միջօրեականով:

16

Բոսֆորի նեղուցով ո՞ր ծովերն են միանում.

- 1) Սև և Մարմարա
- 2) Ադրիատիկ և Հոնիական
- 3) Ազովի և Սև
- 4) Եգեյան և Մարմարա

17

Աֆրիկայի մերձհասարակածային գոտու գետերը հորդանում են.

- 1) ողջ տարվա ընթացքում
- 2) յուրաքանչյուր կիսագնդի գարնանը
- 3) յուրաքանչյուր կիսագնդի ամռանը
- 4) յուրաքանչյուր կիսագնդի ձմռանը

18


Ի՞նչ ծագում ունի Մեծ արգելախութը.

- 1) կորալային
- 2) մայրցամաքային
- 3) հրաբխային
- 4) տեկտոնահրաբխային

19

Ո՞ր օվկիանոսային հոսանքն է քարտեզում նշված Ա տառով.

- 1) Սոմալիական
- 2) Մոզամբիկի
- 3) Բենգելյան
- 4) Կանարյան



20

Ո՞ր պետությունն է քարտեզում նշված Է տառով.

- 1) Գաբոն
- 2) Չադ
- 3) Նիգեր
- 4) Կամերուն

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է երկրի բնակլիմայական պայմաններով:
- 2) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ են ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը և ցածր բնական աճը:
- 3) «Ժողովրդագրական պայթյունը» բնութագրվում է բնակչության դանդաղ աճով և բնորոշ է զարգացած երկրներին:
- 4) Բնակչության թվի կտրուկ աճի հետևանքով զարգացած երկրներում ստեղծվել է «ժողովրդագրական ճգնաժամ»:

22

Ցեղակից լեզուների ամբողջությունը, որն իրենից ներկայացնում է լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմնական, ամենախոշոր միավորը, կոչվում է.

- 1) էթնոս
- 2) լեզվարնտանիք
- 3) լեզվախումբ
- 4) ժողովուրդ

23

Բնութագրումով որոշել պետությունը.

Հարավարևմտյան Ասիայի այս պետությունն ունի բազմազգ բնակչություն: Բնակչության մեծ մասն ուղղափառ քրիստոնյաներ են: Արդյունաբերության մեջ առաջնային տեղը պատկանում է գյուղատնտեսական հումք մշակող ճյուղերին: Աձեցվող կարևորագույն մշակաբույսերն են թեյը և ցիտրուսային պտուղները: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Իրանը
- 2) Վրաստանը
- 3) Ուկրաինան
- 4) Ադրբեջանը

24

2005 թ. ՀՀ է ժամանել 10441 մարդ, մեկնել՝ 18135 մարդ: Միգրացիայի ծավալը հավասար կլինի.

- 1) 8576 մարդ
- 2) 28576 մարդ
- 3) 7694 մարդ
- 4) 8135 մարդ

25

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Խմբային գյուղական տարաբնակեցումը բնորոշ է Կանադային և Ավստրալիային:
- 2) Ջարգացած երկրներում ցածր է ուրբանիզացման մակարդակը:
- 3) Ջարգացող երկրներում ցածր են ուրբանիզացման տեմպերը:
- 4) Կեղծ ուրբանիզացումը բնորոշ է զարգացող երկրներին:

26

Միջերկրական ծով ելք ունեցող պետություն է.

- 1) Սաուդյան Արաբիան
- 2) Լիբանանը
- 3) Իրաքը
- 4) Հորդանանը

27 Ո՞ր երևույթն է կոչվում է «քիմիական արտադրության արտահանում».

- 1) քիմիական արդյունաբերության ապրանքների արտահանումը
- 2) քիմիական արտադրանքը արդյունաբերության այլ ճյուղերում օգտագործելը
- 3) զարգացած երկրների քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները զարգացող երկրներում տեղաբաշխելը
- 4) քիմիական արդյունաբերության որոշ ճյուղերի և արտադրությունների արդյունաբերության այլ ճյուղերի հետ համատեղ միջճյուղային համալիրների ստեղծումը

28 Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.


- 1) Աչքի է ընկնում բնակչության բնական աճի բարձր ցուցանիշով:
- 2) Երկրի բնակչության մեծամասնությունը դավանում է հնդուականություն:
- 3) Բնակչության թվով աշխարհի երկրորդ պետությունն է:
- 4) Երկրում շատ բարձր է ուրբանիզացման մակարդակը:

29 Բնակչությունը խիստ անհավասարաչափ է տեղաբաշխված.

- 1) Ուկրաինայում և Մոլդովայում
- 2) Բելգիայում և Դանիայում
- 3) Չինաստանում և Կանադայում
- 4) Լատվիայում և Լիտվայում

30 Դիագրամում տրված է աշխարհի բնակչության բաշխումն՝ ըստ բարձրության գոտիների: Ո՞ր բարձրության գոտուն է համապատասխանում 1 թիվը.


- 1) մինչև 200 մ
- 2) 200–500 մ
- 3) 500–1000 մ
- 4) 1000–2000 մ



31

Քարտեզում ո՞ր տառով են նշված բնակչության առավել բարձր ծնելիության ցուցանիշ ունեցող երկրները.

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



32

Ո՞ր շարքի երկրներն են առաջատար երկաթի հանքաքարի պաշարներով.

- 1) ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա
- 2) Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա
- 3) Չինաստան, Ուկրաինա, Թուրքիա
- 4) Ավստրալիա, Ռուսաստան, Բրազիլիա

33

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ Արաքսի ավազանին պատկանող գետերը բացառապես սնվում են ձնաանձրևային ջրերով:
- 2) ՀՀ բոլոր գետերը պատկանում են Կասպից ծովի ներքին հոսքի ավազանին:
- 3) Կուրի և Արաքսի միջև ջրբաժան գիծն անցնում է Ջավախքի, Փամբակի, Արեգունու և Սևանի լեռների կատարամերձ տեղամասերով:
- 4) Կուրի և Արաքսի ջրհավաք ավազանների միջև ջրբաժան գիծը ՀՀ գլխավոր կլիմայաբաժանն է:

34

Գեղարքունիքի մարզում երկաթուղային կայարան ունեն.


- 1) Ճամբարակը և Մարտունին
- 2) Մարտունին և Գավառը
- 3) Վարդենիսը և Վարդենիկը
- 4) Սոթքը և Սևանը

35 Ո՞ր գետը Արագածոտնի մարզի տարածքով չի հոսում.

- 1) Ամբերդ
- 2) Քասաղ
- 3) Մեծամոր
- 4) Գեղարոտ

36 Ո՞ր գետն է քարտեզում նշված Գ տառով.

- 1) Հագարու
- 2) Որոտան
- 3) Ողջի
- 4) Մեղրիգետ



37 Ո՞ր ջրեկն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Սևանի
- 2) Արգելի
- 3) Հրազդանի (Աթարբեկյան)
- 4) Քանաքեռի

38 Անտառային ռեսուրսներով աղքատ երկրներ են.

- 1) Մալայզիան և Կոլումբիան
- 2) Ավստրալիան և Եգիպտոսը
- 3) Կանադան և Ֆինլանդիան
- 4) Բրազիլիան և Ինդոնեզիան

39

Տրվածներից ո՞րը պետք է առաջնահերթ հաշվի առնել բնակավայրում թունավոր արտանետումներ ունեցող ձեռնարկությունները տեղաբաշխելիս.

- 1) անթափոն արտադրությունների առկայությունը
- 2) բնակավայրի տարեկան միջին ջերմաստիճանը
- 3) քամիների վարդը
- 4) էլեկտրատրանսպորտի քանակը

40

Ո՞ր պատասխանն է ճիշտ.

Որոշակի կլիմայական պայմաններում, միայն տարվա տաք եղանակներին արեգակնային ճառագայթների ազդեցությամբ մթնոլորտում առաջնային աղտոտող նյութերը քայքայվում են և առաջանում են նոր նյութեր: Այդ երևույթը կոչվում է.

- 1) ջերմային աղտոտում
- 2) թթվային անձրև
- 3) լուսաքիմիական սմոգ
- 4) ջերմոցային էֆեկտ

41

Գրել այն սառը ծովային հոսանքների համարները, որոնք պատկանում են Խաղաղ օվկիանոսին.

- | | |
|------------------|----------------|
| 1) Ֆոլկլենդյան | 5) Պերուական |
| 2) Բենգելյան | 6) Լաբրադորյան |
| 3) Կալիֆոռնիական | 7) Օյասիո |
| 4) Կանարյան | 8) Սոմալիական |

42

Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական պայթյունը».

- | | |
|--------------|-------------|
| 1) Պակիստան | 5) Լեհաստան |
| 2) ԱՄՆ | 6) Գերմանիա |
| 3) Ճապոնիա | 7) Իտալիա |
| 4) Ռուսաստան | 8) Քենիա |

43

Գրել այն ջրէկների համարները, որոնք չեն մտնում Հրագրանի կասկադի մեջ.

- | | |
|-------------|------------|
| 1) Տաթնի | 5) Այրումի |
| 2) Երևանի | 6) Սևանի |
| 3) Արգելի | 7) Արգնիի |
| 4) Քանաքեռի | 8) Շամբի |

44

Տրված պետությունները դասավորել ուրբանիզացիայի մակարդակի աճման կարգով.

- 1) Բութան
- 2) Մեծ Բրիտանիա
- 3) Ռուսաստան
- 4) Հնդկաստան

45

Աշխարհի վառելիքաէներգետիկ արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ

- 1) Ատոմային էներգետիկան զարգացած է տնտեսապես զարգացած երկրներում, որոնք վառելիքով ու ջրաէներգետիկ ռեսուրսներով համեմատաբար աղքատ են:
- 2) Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը համալիր ճյուղ է՝ բաղկացած վառելիքային արդյունաբերությունից և էլեկտրաէներգետիկայից:
- 3) Վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացման հաջորդական երեք փուլերն են ածխայինը, միջուկայինը և նավթագազայինը:
- 4) Նավթի հանույթի ծավալով առաջատար երկրներ են Ճապոնիան, Գերմանիան և Ֆրանսիան:
- 5) Ածխարդյունաբերությունն աշխարհի վառելիքային արդյունաբերության ամենաարագ զարգացող ենթաճյուղն է:
- 6) Էլեկտրաէներգետիկայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն ջրաէլեկտրակայանները:

Բ մակարդակ

46

Քաղաքն արևելյան երկայնության 20°-ի վրա է: Ո՞ր ժամային գոտում է այն.

- 1) 0-ական
- 2) 2-րդ
- 3) 1-ին
- 4) 4-րդ

47

Լեռը օվկիանոսի ափին է՝ 45° գուգահեռականի վրա: 0° ջերմաստիճանի դեպքում մթնոլորտային ճնշումը նրա գագաթին հավասար է 450 մմ ս. ս.: Լեռան բացարձակ բարձրությունը կլինի.

- 1) 4500 մ
- 2) 1345 մ
- 3) 2495 մ
- 4) 3100 մ

48

Ո՞ր շարքի ջրավազանները նույն օվկիանոսի մասեր չեն.

- 1) Օխոտի ծով, Դեղին ծով, Բենգալական ծոց
- 2) Կարմիր ծով, Պարսից ծոց, Արաբական ծով
- 3) Բարենցի ծով, Լապտևների ծով, Արևելասիբիրական ծով
- 4) Հյուսիսային ծով, Բիսկայան ծոց, Բալթիկ ծով

49

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հասարակածային կլիմայական գոտում է այն վայրը, որտեղ գրանցվել է Երկրագնդի վրա տեղումների առավելագույն քանակը:
- 2) Օվկիանոսային տաք հոսանքները խոչընդոտում են տեղումների առաջացմանը:
- 3) Ծովային կլիմա ունեցող շրջաններում տեղումները տարվա ընթացքում բաշխվում են հավասարաչափ:
- 4) Անտիցիկլոններին բնորոշ են տեղատարափ անձրևները:

50

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարավային Ամերիկայի մերձարևադարձային կլիմայական գոտում տարածվում է տայգայի բնական զոնան:
- 2) Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:
- 3) Ավստրալիայում բացակայում է հասարակածային կլիմայական գոտին:
- 4) Եվրասիայում անապատների բնական զոնան ձևավորվում է արևադարձային, մերձարևադարձային և բարեխառն կլիմայական գոտիներում:

51 Նախագահական հանրապետություններ են.

- 1) Հնդկաստանը և Գերմանիան
- 2) Ճապոնիան և Իտալիան
- 3) Թուրքիան և Իսպանիան
- 4) Բրազիլիան և ԱՄՆ-ը

52 «Ժողովուրդ — կրոն» գույգերից ընտրել սխալը.

- 1) իսպանացիներ — քրիստոնեություն
- 2) մոնղոլներ — բուդդայականություն
- 3) պարսիկներ — մահմեդականություն
- 4) ճապոնացիներ — կոնֆուցիականություն

53 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 2) Վուշը բարեխառն գոտու սակավ ջերմասեր մշակաբույս է:
- 3) Ջուտն ու սիսալը հացահատիկային մշակաբույսեր են:
- 4) Թեյի համաշխարհային բերքի 3/5-ը ապահովում են Եվրոպայի երկրները:

54 Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հյուսիսային շրջանն իր զարգացման մակարդակով էականորեն զիջում է հարավային շրջանին:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
- 3) Բրնձի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներից է:
- 4) Նավահանգստային քաղաքներում լայն զարգացում է ստացել նավթավերամշակող արդյունաբերությունը:

55 Բնութագրումով որոշել տարածաշրջանը.

Եվրոպա աշխարհամասի այս տարածաշրջանը հարուստ է անտառային և ջրային ռեսուրսներով: Տարածաշրջանի երկրները բնութագրվում են բնակչության ցածր բնական աճով, իսկ կյանքի միջին տևողությամբ աշխարհի առաջատարներից են: Հավատացյալ բնակչության հիմնական մասը քրիստոնյա բողոքականներ են: Ո՞րն է այդ տարածաշրջանը.

- 1) Հյուսիսային Եվրոպան
- 2) Հարավային Եվրոպան
- 3) Արևելյան Եվրոպան
- 4) Արևմտյան Եվրոպան

56

«Լեռնաշղթա — լեռնագագաթ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Սևանի — Քաշաթաղ
- 2) Ուրծ — Արմաղան
- 3) Բարգուշատ — Մեծ Եղնախաղ
- 4) Միափորի — Լավար

57

ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարվա ցուրտ ժամանակահատվածում միջլեռնային գոգավորություններում դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 2) Հանրապետության տարածքը բարեխառն կլիմայական գոտում է:
- 3) ՀՀ տարածքում ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Արագածի լանջին՝ Քարի լճի շրջանում:
- 4) Տարվա ընթացքում տեղումների նվազագույն քանակը թափվում է գարնան ամիսներին:

58

Ընտրել «օգտակար հանածո — հանքավայր» համապատասխանության ճիշտ շարքը.

- | | |
|------------------|------------|
| 1) պղնձահրաքար | ա. Սվարանց |
| 2) պղնձամոլիբդեն | բ. Սոթք |
| 3) ոսկի | գ. Կապան |
| 4) երկաթաքար | դ. Ագարակ |

- 1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
- 2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
- 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

59

Ի՞նչն ընդհանուր չէ Սյունիքի և Լոռու մարզերի համար.

- 1) Սահմանակից են Ադրբեջանի Հանրապետությանը:
- 2) Արդյունաբերության մասնագիտացման ճյուղերից է գունավոր մետաղա-ծուլությունը:
- 3) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:
- 4) Տարածված են լեռնաանտառային լանդշաֆտները:

60

Տավուշի մարզի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են.

- 1) կարտոֆիլի մշակությունը և թռչնաբուծությունը
- 2) հացահատիկի մշակությունը և ոչխարաբուծությունը
- 3) պտղաբուծությունը և խոզաբուծությունը
- 4) կերաբույսերի մշակությունը և շերամապահությունը

61

Տրված պետությունները դասավորել խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի նվազման կարգով.

- 1) Չինաստան
- 2) Հնդկաստան
- 3) Բրազիլիա
- 4) Արգենտինա

62

Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.

- | | |
|---------------|----------------|
| 1) սլավոնական | 5) քարթվելական |
| 2) ռոմանական | 6) իրանական |
| 3) գերմանական | 7) հնդարիական |
| 4) թյուրքական | 8) հայկական |

63

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------|----------------|
| 1) Կուրո Սիո | 5) Ալյասկայի |
| 2) Գվինեական | 6) Բրազիլական |
| 3) Մոզամբիկի | 7) Գվիանական |
| 4) Գոլֆստրիմ | 8) Մուսսոնային |

64

Գրել ՀՀ ցեմենտի արտադրության կենտրոնների համարները.

- | | |
|---------------|------------|
| 1) Արտաշատ | 5) Գյումրի |
| 2) Երևան | 6) Հրազդան |
| 3) Արարատ | 7) Արթիկ |
| 4) Վաղարշապատ | 8) Գորիս |

65

Երկու քաղաքներ հասարակածի վրա են, որոնցից մեկն արլ. երկ. 90°-ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե. 50°-ի: Որոշել դրանց միջև ամենակարճ հեռավորությունը կիլոմետրերով:

(66-67) Երկրի բնակչության թիվը 1,5 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25 000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ.

66 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

67 Որոշել բնակչության բնական աճի գործակիցը (%):

(68-69) Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 6 մ² է, գետի ջրի արագությունը՝ 3 մ/վ.

68 Որոշել գետի ծախսը:

69 Որոշել գետի հոսքը 1 ժամում:

ՀՀ մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:
- 2) Սևանա լիճը արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
- 3) Շիրակի լեռնաշղթան ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Բագումի լեռնաշղթայից մինչև Վիրահայոց լեռնաշղթան:
- 4) Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Իշխանասարն է:
- 5) Արփայի գոգավորությունը Հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում է:
- 6) Փամբակի և Ծաղկունյաց լեռները արտաքին շարի լեռներ են: